ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԼՈՒՅՍ
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՏԻԿԻՆ Ա. ՍԱՄՍՈՆՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Սամսոնյան.

Ի պատասխան Ձեր 24.10.2018թ. հ.Ե-3/06 գրության՝ տեղեկացվում է.

Բնակարաններում բարձր աղմուկի չափը ՀՀ օրենսդրությամբ սահմանված առողջապահական նորմերին հակասելու փաստն արձանագրելու և դրանց վերացմանն ուղղված միջոցներ ձեռնարկելու իրավասությունը վերապահված է ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին:

Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի առևտրի, սպասարկումների և գովազդի բաժնի աշխատակիցների կողմից ուսումնասիրվել է բնակիչների կողմից բարձրացված հարցը և Արշակունյաց պողոտայի թիվ 278 հասցեում գործունեություն ծավալող անհատ ձեռնարկատեր Ռոզա Շահումյանին զգուշացվել է համաձայն՝ ՀՀ ՎԻՎ օրենսգրքի 180-րդ հոդվածի, պահպանել լռության կանոնները: Ա/Ձ Ռոզա Շահումյանը չունի ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվություն:

Ս.թ. հունիսի 19-ին Ն. Շենգավիթ 12-րդ փողոցի 1-ին նրբանցքի թիվ 3 տանն իրականացվել են աղմուկի մակարդակի գործիքային չափումներ, որի արդյունքում՝ ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ «Երևանի քաղաքային կենտրոն» մասնաճյուղի կողմից 25.06.2018թ. տրված փորձագիտական եզրակացության համաձայն՝ չափման արդյունքներով ձայնի համարժեք և առավելագույն մակարդակները համապատասխանել են «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» սահմանված սանիտարական նորմերի պահանջներին: Ս.թ. նոյեմբերի 1-ին գրություն է ուղարկվել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի Երևան քաղաքի տարածքային կենտրոն՝ կրկին իրականացնելու ձայնային չափումներ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ